

Մշակութային հեղափոխություն

ԺԱՆ ԲՈՂԲԻՅԱՐԻ «ՄԻՄՈՒՅԱԿՐԸ» ԵՎ ԲԱՐԱԸ ՕԲԱՄԱՅԻ «MEDZ YEGHERN»-Ը Մաս Ա. Հուլիսյան մտորումներ

Արա Մարջանյան

“It’s not dark yet, but it’s getting there”.
Bob Dylan, Time Out Of Mind¹, 1997

Նախաբան

Սույն հոդվածում մենք, ըստ էության, փորձում ենք երկու հարց արծարծել: Առաջինը հետևյալն է. ի՞նչ է նշանակում Հայոց եղեռնի ճանաչումը «պոստ-պոստմոդեռնի» մեր ժամանակներում: Ինչպե՞ս է դա հնարավոր, և հնարավո՞ր է, արդյոք, առհասարակ: Երկրորդ հարցը, որն առաջինի հետ բազում աղերսներ ունի, բայց և չի պարփակվում ու սպառվում դրանցով, հետևյալն է. ի՞նչ է «ինքնության ճգնաժամը», որի մասին վերջին տարիներին այսքան խոսակցություններ են վարվում աշխարհում, մեր հարևան երկրներում ու մեզանում: Այս հարցերն այնքան ծավալուն են, որ դրանց համարժեք ձևակերպումն անգամ, էլ չենք խոսում քիչ թե շատ գոհացուցիչ պատասխանների մասին, իսկական *tour de force* է: Նման ձեռնարկումը կվիատեցներ ինձնից շատ ավելի բանիմաց ու խիզախ հեղինակի: Արդարացումները, որ ունեն կամ կարծում են, որ ունեն, երկուսն են:

Նախ, տողերիս հեղինակը եղեռնաբանության կամ հոգեբանության մասնագետ չէ, ոչ էլ պատմաբան, դիցաբան, ազգագրագետ կամ, առավել ևս, կինոռեժիսոր: Իսկ դրանք հենց այն մասնագիտություններն են, որոնց

¹ «Նորավանք» ԳԿՀ փորձագետ, Հայաստանում ՄԱԿ ԶՕ էներգետիկայի և տրանսպորտի գծով ազգային փորձագետ, տ.գ.թ., ավագ գիտաշխատող:

² «Մութը դեռ չի ընկել, բայց գործը դրան է գնում» (այս և մյուս թարգմանությունները մերն են՝ *Ա.Մ.*): Դիլանի երգերի այս այբումի անվանումը կարելի է հասկանալ թե՛ որպես «խելագարված ժամանակները», թե՛ որպես «մտացածին ժամանակ», ժամանակը՝ որպես ուղեղի արգասիք, ճիշտ ինչպես «աստված՝ մեքենայից»:

ներկայացուցիչների հողվածներին առավել հաճախ կհանդիպեք նշյալ հարցերին նվիրված հայրենական հրապարակումներն ընթերցելիս: Մասնագիտությամբ ինժեներ եմ, էներգետիկ համակարգերի մասնագետ և վերը նշված հարցերում՝ դիլետանտ: Եվ հենց այս հանգամանքն է, որ ինձ խիզախություն է տալիս: Քանի որ վստահ եմ. բարձրացված հարցերի շուրջ մերօրյա բազմաթիվ քննարկումներում պակասում է պրակտիկ, եթե կուզեք՝ ճարտարագիտական, համակարգային տեսակետը:

Մյուս հանգամանքն այն է, որ հողվածս բոլորովին չի հավակնում անդրադառնալ վերը նշված հարցերի ամբողջական քննությանը, առավել ևս՝ չի պարունակում վերջնական ձևակերպումներ կամ լուծումներ: Խնդիրը, որ դրել ենք մեր առջև, շատ ավելի համեստ է. փորձել հասկանալ արդի աշխարհի այն որոշիչ գործընթացները, որոնք անմիջական ազդեցություն ունեն բարձրացված հարցերի համար պրակտիկ, առօրեական և, հետևաբար, հաճախ անտեսանելի ու անտեսվող հարթություններում: Նույնիսկ այս դեպքում մեր պնդումները միայն նախնական են: Ինչպես սիրում էին գրել ԽՍՀՄ որոշ ամսագրերում 1920-ական թվականների վերջին, «սույն հողվածն ընդամենը հրավեր է հետագա *դիսկուսիայի* համար»:

Եթե Աստված, անոխակալ և բարեգութ, մեզ դրա ժամանակը պարզվի:

1. Հարցերը, որոնք մենք տալիս ենք

**«Պարոն դիրիժոր, պարոն դիրիժոր,
դուք Օննելա Մուտիի ի՞նչն եք»:**

Հայկական լրատվամիջոցների Ռեկարդո Մուտիին ամենից հաճախ տրվող հարցը Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարությունների ժամանակ:

23 հուլիսի 2001թ.

Անցած ամռան հուլիսյան տապին հայ տղամարդու աչքերի համար իսկական խրախճանք էր հետևել թեթև, նրբաճաշակ, սպիտակ զգեստ հագած, սլացիկ Ֆանի Արդանին (*Fanny Ardant*)՝ Հայոց եղենի հուշարձանի խիստ ու տխուր բազալտե սալերի ֆոնին գեղանի շարժումներ անելիս: Ֆրան-

սիացի դերասանուհին Հայաստանում էր «Ոսկե ծիրանի» 8-րդ կինոփառատոնի շրջանակներում և նրա իրական զարդն ու տեղեկատվական «մեխն» էր: Ուստի, զարմանալի չէ, որ նա մեր ԶԼՄ ուշադրության կենտրոնում էր: Ստիպված ենք ավելացնել՝ յուրահատուկ ուշադրության, քանի որ տկն Արդանին պատեհ-անպատեհ առիթներով տրվող բազմաթիվ հարցերը զարմանալիորեն միօրինակ էին ու, չնայած նախապես արված բազմաթիվ նախազգուշացումներին, ունեին, այսպես ասած՝ ծագումնաբանական և հեմատոլոգիական երանգ («դուք հայկական արյուն ունե՞ք»):

Եվ ավստ՛ ու: Հաճախ չէ, որ Երևան է գալիս կյանքի, մարդկային զգացմունքների, արդի եվրոպական մշակույթի ու հասարակության մասին պրակտիկ գիտելիքների այսչափ մեծ պաշարով այդքան հետաքրքիր մարդ: Ասեմ ավելին՝ այսչափ հմայիչ կին: Չափազանց լավ առիթ էր հարցնելու, թե ինչ է, օրինակ, նա մտածում խոր սերն ու այրող կիրքը տարանջատող սահմանագծի մասին, և կա արդյոք այդ սահմանագիծը: Չի՞ կարծում տկն Արդանը, որ արևմտյան քաղաքակրթության տղամարդկայնության, *վիրիլության* ներկայիս անկումը՝ անբռնազբոս զգացմունքայնության և սպառողական հասարակության տրամաբանական արդյունք են: Ի՞նչ է նա մտածում Եվրոպայում բազմամշակութայնության (մուլտիկուլտուրալիզմի) ներկայիս ճգնաժամի մասին:

Այո, լավ առիթ էր, բայց, ցավոք, չտվեցինք այս հարցերը, ինչպես և թերացանք պարզել, թե ինչու տիկին Արդանը, այնուամենայնիվ, համաձայնեց խաղալ «Լիբերտինը» ֆիլմում¹: Կամ՝ մեր բարոյալքված ժամանակներից հետ նայելով XVIII դար, ի՞նչ է նա մտածում իրականում Դենի Դիդրոյի և, ընդհանրապես՝ Լուսավորության դարաշրջանի ժառանգության մասին: Կամ՝ համաձայն է արդյոք տկն Արդանը Դեն Սյառ Պինի սրամիտ տեսակետին, թե՛ «դեռ վաղ է խոսել Ֆրանսիական հեղափոխության բարերար ազդեցության մասին»²: Կամ՝ չի՞ կարծում արդյոք տկն Արդանը, որ

¹ «Le Libertin»՝ 2000թ. Էկրան բարձրացած Գ.Ագիոնի (*Gabriel Aghion*) ֆիլմը: Այն մոտավորապես պատմում է Դ.Դիդրոյի և մոտավորապես Լուսավորության ժամանակաշրջանի մոտավորապես «ինտելիգենցիայի» մասին:

² Երիտասարդ *խունվեյթինների* կողմից հինգ անգամ նվաստացված Դենն այստեղ նկատի ուներ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Սակայն հիմա ես կարծում եմ, որ նա գուցե ակնարկում էր «1968թ. մայիսը» Ֆրանսիայում (տե՛ս հոդվածի հաջորդ մասում):

ազգ-պետությունների ինքնիշխանության էրոզիան ապագա քառսի չարագույժ նշանն է: Չի տեսնում նա որևէ կապ իր չքնաղ ու գայթակղիչ ընկերուհու՝ դերասանուհի Արիել Դոմբասլի (*Arielle Dombasle*), նրա հմայիչ (արդեն նախկին) ամուսնու՝ հայտնի հրապարակախոս (ոմանք կասեին՝ փիլիսոփա), գրող, միլիոնատեր և ֆիլանտրոպ Բեռնար Լևիի¹ ու մեր աչքերի առջև քառսի գիրկը նետված Լիբիայի միջև: Ինչպե՞ս է նա գնահատում վարչապետ Քեմերոնի, նախագահ Սարկոզիի, Բեռնար Լևիի կամ ՆԱՏՕ դերակատարումն այս գործում:

Ավաղ, այս հմայիչ ու չափազանց հետաքրքիր կնոջը չտվեցինք այս և շատ այլ հետաքրքիր հարցեր: Փոխարենը, Ս.Փարաջանովի տուն-թանգարանի մթնոլորտից ազդված Ֆանիից վերջապես խոստովանություն կորզեցինք, որ ժամանակին իր տատիկի սիրեկանը հայ է եղել: Միայն այսքանը: Միայն սա մնաց մեր ՋԼՄ տպագիր էջերում, կայքէջերում և մեր (ազգի) հավաքական հիշողությունում: Դե, ինչ, ճիշտ 10 տարի առաջ՝ արդեն հեռավոր 2001թ. հուլիսին, «Լա Սկալայի» Երևան պատմական այցելության ժամանակ լեզենդար Ռիկարդո Մուտիին ուղղված հայրենական ՋԼՄ հարցերից հետո ես այլևս ոչ մի բանի վրա չեմ զարմանում:

Մինչդեռ, հայտնի ճշմարտություն է. լավ ձևակերպված և ժամանակին բարձրացված հարցը գործի կեսն է: Իսկ որոշ մտավորականներ, որոնց մասին կխոսենք ստորև, կասեին նույնիսկ, որ աշխարհն ինքն այնպիսին է, ինչպիսին են աշխարհին ուղղված ձեր հարցերը:

Վերադառնանք, սակայն, 2011 թվականի հուլիս: Չնայած Երևանյան այցի լարված գրաֆիկին, տկն Արդանն իր պարտքն էր համարել հուլիսի 11-ին այցելել Ծիծեռնակաբերդ: Եվ այստեղ, Եդեռնի համալիրի հսկայական բազալտե սալերի ֆոնին, վեր բարձրացնելով ձեռքերը և դիմելով մոտակայքում հարմարորեն հայտնված հեռուստախցիկին, նա բացականչեց. «*Ինձ թվում է, որ բոլոր հայերն այստեղից են դուրս եկել*»: Ինչով անմիջապես գերեց մեր բոլորիս հոգիները՝ կոպտացած աշխարհի կողմից Հայոց ցեղասպանությունը համառորեն չճանաչելուց, չարացած մեր արդար Դատն

¹ *Bernard Henri Levy*՝ ֆրանս-իրեական ձախիկ (*leftist, левацкий* - գիտեմ, որ սա հայերեն *ձախիկ* չի նշանակում, բայց չեմ կարող ինձ գուցե, առավել ևս, որ հայերեն համարժեք եզրը գոյություն չունի), անարխիստա-ցանցային երիտասարդական շրջանակներում հայտնի է պարզապես որպես *Բըհըլ* (*BHL*, նրա մասին՝ ստորև):

արհամարհելուց: Բայց, առաջին, հուզական ալիքից հետո, մտորելով այս բացականչության բուն իմաստի շուրջ, վրա հասավ և որոշակի մերժման ու տազնապի զգացումը: Բանն այն է, որ սկն Արդանը տառացիորեն կրկնեց փարիզյան բռնեմի ու «արվեստասեր ինտելիգենցիայի» կուռք և գուրու ժան Բողրիյարի քանիցս արտահայտած հետևյալ միտքը. «Օ՛հ, այս հայերը. սրանց ողջ ինքնությունը պայմանավորված է կոտորածով»:

Խնդիրն այն է, որ համաշխարհային թատերաբեմում Բողրիյարը շատ ավելի ազդեցիկ (միգուցե ոչ այդքան հմայիչ) ֆիգուր է, քան սկն Արդանը: Ավելի ազդեցիկ, քան «Ոսկե ծիրանի» բոլոր 8 փառատոները: Նույնիսկ ավելի ազդեցիկ, քան վերջին տասնամյակներին աշխարհի բոլոր երկրներում կայացած բոլոր կինոփառատոները միասին վերցրած: Կարծում եմ՝ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ նա մեր ժամանակների, թերևս, այն եզակի անձնավորություններից է, ում մտքերը և գրքերը, մի կողմից, սնում, մյուս կողմից՝ ապշեցուցիչ ճշգրտությամբ նկարագրում են ներկայումս աշխարհում ծավալվող գրեթե բոլոր ձևագոյացնող գործընթացները: Մարդկային հասարակության դեհումանիզացիայից մինչև «արաբական զարթոնք», մեր հոգիների և ուղեղների վրա սիմվոլների և տարատեսակ սիմուլյացիաների բռնատիրության հաստատումից մինչև «վայրագ կապիտալիզմի» դեմ ներկայիս հասարակական ընդվզումը: «Վիքիլիքսից», հաքերական խմբերից մինչև երիտասարդական միջազգային ցանցային ենթամշակույթ, «նոր ձախեր» և «գունավոր հեղափոխություններ»:

Աշխարհը բարդ է և օր օրի դառնում է էլ ավելի բարդ [1]: Այն համարժեք ընկալելու և հասկանալու համար մենք՝ որպես հասարակություն, պետք է օժտված լինենք համակարգային ընկալման խորության ու բարդության առնվազն նույնքան կամ գոնե համեմատելի մակարդակով: Այլապես կթերանանք ձևակերպել ու տալ այն հարցերը, որոնք զարգացման նոր հորիզոններ են բացում, գուցե նաև գոյացնում են այդ հորիզոնները: Մինչդեռ, ցավոք, վերջին տասնամյակներում մեր հասարակությունը կորցրեց, իսկ այնուհետև՝ թերացավ ձևավորել արդի աշխարհի ընկալմանը համարժեք իր «նյարդային համակարգը»: Պատճառները տարաբնույթ են, և առաջին հերթին՝ նյութական ու քանակական:

ԽՍՀՄ փլուզումից հետո մենք տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով կորցրինք բարդ գիտագործնական, հետազոտական, ինժեներական և մշակութային ստեղծագործ աշխատանքով զբաղված մասնագետների հսկայական բանակ: Իրողություն, որը չէր կարող բացասական հետևանքներ չունենալ հասարակության վրա ընդհանրական մակարդակով՝ միօրինակեցնելով, պարզեցնելով, գոեհկացնելով այն (առավել ցայտուն դատեսանելի է մեր լրատվամիջոցների և հեռուստատեսության պարագայում): Չէ՞ որ մոտ կեսմիլիոնանոց¹ մասնագիտական այս բանակն էր, որ պահանջկոտ ու սթափեցնող լսարան էր հանդիսանում: Այն ապահովում էր հայ հասարակության զարգացումը, աշխարհի համարժեք ընկալումը և իր անմիջական, մասնագիտական գործունեությունից զատ՝ կատարում էր էլ ավելի կարևոր մի բան՝ ապահովում էր ազգի «ապագայի արտադրությունը»²: Մասնագիտական բարդ աշխատանքով զբաղված, ակտրոնիզմով տոգորված մարդկանց այս բանակի գործունեությունը, ինչպես նաև Գ.Հարությունյանի դիպուկ ձևակերպմամբ՝ «Երկրորդ Հանրապետության տարիներին կուտակած քաղաքակրթական ռեսուրսը»՝ ահա այն վճռորոշ գործոնները, որոնք հնարավոր դարձրին Սպիտակի աղետալի երկրաշարժի և վաղ 90-ականների համակարգային ճգնաժամի իրողությունների հաղթահարումը, Արցախյան պատերազմում մեր հաղթանակը [2]:

Մյուս պատճառն ունի ոչնչության, գաղափարախոսական բնույթ: Բանն այն է, որ ԽՍՀՄ տարիներին ձևավորված գիտելիքների մեր համակարգն անուրանալի ձեռքբերումներով ու արժանիքներով հանդերձ, կրում էր նաև խորհրդային, կոմունիստական գաղափարախոսության ինդոկորինացիոն խարանը: Այլ խոսքերով՝ այն ձևավորվել էր աղճատված, դեֆորմացված կերպով [1]: Դա հատկապես ճշմարիտ է գիտելիքների այնպիսի «փափուկ» (*soft*) ոլորտների դեպքում, ինչպիսիք են հասարակա-

¹ Գնահատականը բերված է «Նորավանք» ԳԿՀ և ՀՀ ԳՊԿ համատեղ իրականացրած «Նորավանքյան ամառային դպրոցի» 2010թ. սեմինարների ժամանակ Գ.Հարությունյանի («Նորավանք» ԳԿՀ) և Ս.Հարությունյանի (ՀՀ ԳՊԿ) ելույթներում: Հանրապետության բնակչության ընդհանուր թվի հետ իր համամասնությամբ ՀԽՍՀ-ն այս առումով զերազանցում էր ԽՍՀՄ բոլոր այլ հանրապետություններին, ներառյալ՝ Ռուսաստանը և Բալթյան երկրները, և առաջ էր աշխարհի շատ զարգացած ու զարգացող երկրներից, <http://www.noravank.am/arm/seminar>

² Այս ձևակերպման համար պարտական ենք պոետ, էսսեիստ, հրապարակախոս, մշակութաբան Ռ.Անգալադյանին և նկարիչ, քանդակագործ, գծանկարիչ Է.Խարազյանին:

գիտությունը, փիլիսոփայությունը, հոգեբանությունը և այլն: Մասնավորապես, մեր տեսադաշտից գրեթե ամբողջությամբ դուրս մնացին և մեր գործնական խնդիրների տեսանկյունից շարունակում են չյուրացված և չմեկնաբանված մնալ, օրինակ, մարքսիզմի ռադիկալ քննադատությանն ուղղված նախորդ դարի 60-70-ականների աշխատություններն ու շարժումները, կամ հետմարքսյան սոցիոլոգիական ուսումնասիրությունները, կամ պոստմոդեռնիզմի փիլիսոփայական, իմացաբանական, սոցիալական, մշակութաբանական և գեղարվեստական բազմաթիվ ու բազմապիսի աշխատություններ և գործեր: Մինչդեռ այս և այլ՝ մեզ տակավին ոչ այնքան ծանոթ իրողություններն են, որ կանգնած են արդիականության կարևոր երևույթների թիկունքում:

Ժամանակին, երբ հայերեն թարգմանվեց Վ.Ս. Ներսեսյանցի «Հեգելը» գիրքը¹, նախաբանում նա անհրաժեշտ էր համարել հետևյալ կերպ բացատրել հայերենով Հեգելին նվիրված ևս մեկ աշխատություն տպագրելու անհրաժեշտությունը. «Հայտնի է, որ իր «Պատմության փիլիսոփայություն» աշխատությունում Հեգելը բազմիցս հիշատակում է Հայաստանը: Ճիշտ է, այդ հիշատակումները... ամբողջությամբ բովանդակագուրկ են, որովհետև Հեգելն իր ողջ իրազեկությամբ հանդերձ՝ չգիտեր Հայաստանի պատմությունը, ինչպես և շատ այլ բաներ: Հին հույների մասին Հ.Հեյնեի սրամիտ ասույթը կիրառելով Հեգելի նկատմամբ՝ կարելի է ասել, որ «ընդարձակ էին այն գիտելիքները, որոնք Հեգելը չուներ»: Դե, իսկ այն, որ Հայաստանը Հեգելին գիտե ավելի լավ, քան Հեգելը՝ Հայաստանը, ինքը՝ փիլիսոփան, թերևս, դասեր «համաշխարհային ոգու բազմաթիվ խորամանկությունների» շարքը»²:

Մեր մոտեցումն այստեղ ճիշտ հակառակն է: Այն հանգամանքը, որ Բողոքիչարը հստակ պատկերացում չունի Հայոց պատմության մասին, թերևս, «կոմպենսացվեր» նրանով, որ մենք՝ հայերս, որպես հասարակություն, ընդհանրապես չգիտենք Բողոքիչարին: Ոչ ծանոթ ենք, ոչ էլ առանձնա-

¹ Ներսեսյանց Վ.Ս., Հեգել, Երևան, ԵՊՀ հրատարակություն, 1986թ.:

² Կարծում եմ՝ Վ.Ս. Ներսեսյանցն իրեն բնորոշ հումորով այստեղ ակնարկում էր «մարքսիզմ-լենինիզմի» գաղափարախոսական կաթեխիզիսը, ըստ որի՝ ԽՍՀՄ բոլոր անկյուններում երիտասարդ ուսանողներն ու ասպիրանտներն օրն ի բուն ստիպված էին սերտել Լենինի հայտնություններն առ այն, թե ինչպես Մարքսը վերջապես շրջեց գլխիվայր կանգնած Հեգելին:

պես ուզում ենք ծանոթ լինել նրա աշխատություններին: Սակայն, «համաշխարհային ոգու բազմաթիվ խորամանկությունների» ծուղակը նորից չընկնելու համար, կարծում եմ, անհրաժեշտ է քաջատեղյակ լինել դրանց և քննել Բոդրիյարի հիմնական պնդումները: Ընդ որում՝ անկախ այն բանից, թե ինչ է նա ասել կամ չի ասել մեր և մեր պատմության մասին: Այն, ինչ նա ասել է արդի աշխարհի մասին, դրա համար ավելի քան բավարար առիթ է: Էլ չենք ասում, որ այն, *ինչ* և *ինչպես* ասել է նա մեր մասին, անմիջականորեն կապված է Հայաստանի Երրորդ հանրապետության, թերևս, ամենաէական խնդիրների հետ. ինչպես ենք տեսնում մեր ապագան, ինչպես է հնարավոր Հայոց եղեռնի ճանաչումն արդի աշխարհում:

Հետևաբար, կարծում եմ, արժե հողվածով անդրադառնալ Բոդրիյարի պնդումներին՝ առհասարակ, և Հայոց ցեղասպանության ու հայերիս ինքնության մասին նրա դիտարկումներին՝ մասնավորապես: Հակառակ դեպքում, համատեքստից կտրված, Բոդրիյարի որոշ պնդումներ կարող են խանգարել մեզ համարժեք հասկանալ և ընկալել նրա մտորումները փոփոխվող աշխարհի խորքային շարժիչ ուժերի մասին:

2. Հերոսի հայտնությունը

«Քանի որ աշխարհը շարժվում է դեպի գառանցանք, մենք էլ պետք է կամաց-կամաց հանգենք գառանցանքի տեսակետին»:

Ժան Բոդրիյար,
Չարի թափանցիկությունը, 1990թ.

2011թ. հուլիսի 27-ին լրացավ ֆրանսիացի մշակութաբան, ԶԼՄ սոցիոլոգ և, այսպես ասած՝ «հրապարակախոսական փիլիսոփայության» ֆրանսիական դպրոցի ամենավառ ներկայացուցիչներից մեկի՝ Ժան Բոդրիյարի (*Jean Baudrillard*) ծննդյան 82-ամյակը: Մեզանում այս փաստը գրեթե աննկատ անցավ¹: Հասկանալի պատճառով ԽՍՀՄ գոյության տարիներին Բոդրիյարի 1960-ական թվականների վերջի և 70-80-ական թվականների հիմնարար

¹Տե՛ս Նորավանք ԳԿՀ կայքի «FUTURIS» էջում հուլիսի 27-ին զետեղված Ժ.Բոդրիյարին նվիրված մեր նյութը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5950

աշխատությունները հայ հասարակությանը գրեթե անհասանելի էին: Մակայն տարօրինակ կերպով դրանք և Բողրիյարի 90-ական թթ. աշխատությունները մեր հասարակության համար մնացին նույնքան դժվարահաս: Եվ դա՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ, կարծես թե, վերացել էին մեզ կադապարող գաղափարախոսական վանդակաճաղերը (ստորև փորձենք ցույց տալ, որ դա այդպես չէր), իսկ պոստմոդեռնիստական իրողություններն իրենց կաշուն արմատներն արդեն ամրորեն խորացրել էին մեր հասարակությունում: Աննկատ անցավ նաև նրա մահը 2007թ. մարտի 7-ին¹:

Մինչդեռ Բողրիյարը մոտ երեք տասնյակ գրքերի և բազում հոդվածների հեղինակ է, մեր ժամանակների բնութագրական երևույթների խոր մեկնաբան, ում մտորումներն ու պատկերները ներագդել և ներագրում են մեր ժամանակների փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հրապարակախոսության, հանրային կյանքի և կերպարվեստի գրեթե բոլոր ուղղությունների վրա՝ սկսած հանրահայտ «Մատրիցը» ֆիլմից, վերջացրած ներկայիս հակազորալիստական շարժումով: Նա իրավամբ համարվում է ինտելեկտուալ պաշտամունքային ֆիգուր, պոստմոդեռնիզմի վառ ներկայացուցիչներից մեկը, ով կարողացավ հաղթահարել հենց պոստմոդեռնիստական դիսկուրսի սահմաններն ու հայտնվել դրանից անդին²: Նոր ու տակավին անհայտ *terra incognita*-ում, ասել է թե՛ պոստ-պոստմոդեռնի մեր ժամանակներում:

Բողրիյարի կյանքն ու գործունեությունը հայերեն լեզվով ներկայացնելը, գոնե՝ ուրվագծելն անհրաժեշտ է ոչ միայն նրա համար, որ մինչ օրս նման բան պարզապես չի արվել, այլև այն բանի համար, որ ռուսերեն և անգլերեն լեզվով հասանելի հրապարակումներից շատերը հախուռն են, տենդենցիոզ, ոչ ամբողջական և շատ դեպքերում՝ ուղղակի ապակողմնորոշող: Բողրիյարի պարագայում, որի կյանքը հարուստ չէր արտաքին դրամատիկ պահերով (թերևս միակ բացառությունը Ֆրանսիայում 1968թ. մայիսյան ուսանողական և աշխատավորական շարժման բուռն դեպքերն էին), դա կնշանակի քննել նրա մտքի կայացումը, գործունեությունն ու հրատարակած գրքերը:

¹ Եթե չհաշվենք հայկական կայքէջերից մեկում 2007թ. մարտի 31-ին տեղակայված Բրաքյան պատերազմին և դրա լուսաբանման մեջ արդի ՋԼՄ դերակատարմանը նվիրված Բողրիյարի հոդվածը թարգմանված Վ.Ֆերեշեյանի կողմից, <http://www.armtown.com/news/am/zam/20070331/5828/>

² Բողրիյարը պնդում էր, որ «պոստմոդեռնիզմը» շաղախված է հուսալքությամբ ու ձանձրությամբ (տե՛ս նրա հարցազրույցը ռուսական «Էքսպերտ» ամսագրին, http://expert.ru/expert/2002/17/17ex-bodrijar_37868/): Մեր ժամանակներին բնորոշ «հուսալքության» և «ձանձրության» մասին դիտարկումները մեզ դեռ պետք կգան:

Մի փոքր սխեմատիկորեն (ներելի մոտեցում Բողոքիչարի նման բարդ, հաճախ խաբուսիկ ու երկիմաստ հեղինակի դեպքում) այդ գործունեությունը կարելի է բաժանել վեց հիմնական փուլերի: Առաջին՝ սկզբնական փուլը ծանոթացումն է պատաֆիզիկայի, գերմանական փիլիսոփայական և պոետիկ մտքի հետ, հանդիպումը մարքսիզմին: Երկրորդ փուլը նեոմարքսիզմի, կապիտալիստական հասարակարգի ռադիկալ քննադատության փուլն է՝ մեծապես ներազդված Ա.Լեֆևրի և Ռ.Բարտի աշխատություններով: Այն ներառում է Ֆրանսիայում 1968թ. դեպքերը և պսակվում Բողոքիչարի առաջին մեծ՝ «Իրերի համակարգը» գրքի հրատարակումով: Երրորդ փուլը, որն սկսվում է «Սպառողական հասարակություն» գրքի հրատարակումով (1970թ.) և ավարտվում «Արտադրության հայելին» գրքով (1973թ.), նշանավորվում է նեոմարքսիզմից Բողոքիչարի հրաժարումով, մարքսիզմի և ստրուկտուրալիզմի գաղափարախոսական հաղթահարումով: Չորրորդ փուլը, որն անվանել ենք «սոցիալականի մահը», եզրագծվում է «Միմլոլիկ փոխանակում և մահ» (1976թ.) ու «Գայթակղություն» (1979թ.) աշխատություններով: Հաջորդ՝ 5-րդ փուլը պայմանականորեն կոչել ենք «իրականության մահը»: Այն ներառում է «Միմուլյակրը և սիմուլյացիան» (1981թ.) հայտնի աշխատությունը և ավարտվում 1990թ. «Չարի թափանցիկությունը» գրքի հրատարակմամբ, որով և կավարտենք Բողոքիչարի առանձին մենագրությունների քննումը: Բողոքիչարին նվիրված բաժնի վերջում հակիրճ կդիտարկենք նրա ավելի ուշ շրջանի աշխատությունները, ինչպես նաև նրա մտքերի ու պատկերների ազդեցությունն արդի մեդիա դաշտի ու կերպարվեստի վրա:

2.1. Մկիզբ. պատաֆիզիկայից դեպի մարքսիզմ և նեոմարքսիզմ

*«Կլիշեները Բացարձակի ամրաններն են»:
Սիֆրեդ Շարի*

Բողոքիչարը ծնվել է 1929թ. հուլիսի 27-ին, Ֆրանսիայի հյուսիս-արևմուտքում գտնվող հինավուրց ու սքանչելի կաֆեդրալ Ռեյմսում: Ինչպես կասեին ոչ վաղ անցյալում՝ ծառայողների ընտանիքում: Տեղի լիցեյում ուսանելու տարիներին փիլիսոփայության պրոֆեսոր Է.Պելլեի (*Emmanuel Peillet*) դասերին

նա առաջին անգամ ծանոթանում է պատաֆիզիկայի (*pataphysics*) «հիմունքներին»: Խորհրդանշական հանդիպում, որը, հանդգնենք պնդել, էապես ձևավորեց երիտասարդ Բողրիյարի մտածելակերպն ու աշխարհընկալումը՝ հետագա բոլոր տարիների համար: Իրոք, սյուռեալիստների կնքահայրերից մեկի՝ կատակասեր, սկանդալասեր և թմրամոլ Ալֆրեդ Ժարիի (*Alfred Jarry*) կողմից դեռ 1893թ. ներմուծված [3], փոքր-ինչ չարաճճի, հումորային *պատաֆիզիկա* եզրը¹ ինքը՝ Ժարին, սահմանում է իբրև «երևակայական լուծումների գիտություն, որն օբյեկտները ներկայացնում է խորհրդանշորեն, ուրվագծում ու սահմանում է դրանք հենց իրենց իսկ բնորոշ վիրտուալությամբ (*virtuality*)» ([4], II, viii): Կարելի է միայն զարմանալ այս սահմանման արդիական հնչեղության վրա, որը, հիշեցնենք, արված է ինտերնետի և մեր վիրտուալ իրականության հայտնությունից ավելի քան մեկ դար առաջ: Այս հակիրճ ձևակերպման մեջ է հասուն Բողրիյարի գրեթե բոլոր հիմնական պնդումների և հասկացությունների ակունքը: Ինձ համար, սակայն, առավել խորհրդանշական, եթե կուզեք՝ կիրառական նշանակություն ունի այն հանգամանքը, որ ըստ նույն Ժարիի՝ պատաֆիզիկա «գիտությունը» սերում է Խիտոսի Հիպոկրատեսից և ունի Սոֆրոտատես Հայից (*Sophrotatos the Armenian*): Եվ այստեղ ես նշմարում եմ հայերիս ինքնության և հայի ընդհանրական կերպարի հետ Բողրիյարի՝ սիմվոլիզմով լի առաջին հանդիպում-բախումը՝ արդեն իսկ պարուրված միստիֆիկացիայի ու փոքր-ինչ համարձակ հումորի մթնոլորտով²:

¹ Պսևդոհունարենից (*ta epi ta metaphusika*): Այստեղ խաղարկվում է հայտնի այն հանգամանքը, որ *մետաֆիզիկա* եզրը ներմուծվել էր, այսպես ասած, կիրառական շարժառիթներով, Արիստոտելի աշխատությունների խմբագրման ժամանակ: Տառացիորեն *մետաֆիզիկա*-ն նշանակում է «այն, ինչ գալիս է (Արիստոտելի) *Ֆիզիկայից* հետո»: *Պատաֆիզիկան* էլ, իր հերթին, այն է, ինչը գտնվում է *մետաֆիզիկայից* վեր: Այսպիսով, *պատաֆիզիկան* այն է, ինչ գտնվում է ֆիզիկայից հետո գտնվածի վերևում:

² Ի դեպ, հայկական *պատաֆիզիկաներին* (<http://armpataphysics.ucoz.com/>) և արվեստագետներին հարց տանք. ինչու է այնուամենայնիվ, ըստ Ժարիի՝ այս «գիտությունը» սերում Սոֆրոտատես Հայից: Եթե Ժարիի «Ոբյուս արքան» Լեհաստանից էր, ինչը սյուռեալիզմի մասնագետներից մեկի կարծիքով՝ նշանակում է, որ «նա ոչ մի տեղից էր», ապա նշանակում է դա արդյոք, որ երևակայական Սոֆրոտատես Հայը «ոչ մեկն էր», ունիվերսալ, հավերժ մարդ էր: Ռ.Անգալադյանի դիպուկ ձևակերպմամբ «հայը՝ պատմական և սոցիալական սյուռեից դուրս» [5]: Եվ ընդհանրապես, դիտարկվել է և արդյոք մեր ինքնության առումով հայի ընդհանրական կերպարի առանձնահատկությունները, դրանց ընկալման ձևերը XX դարի արևմտյան մշակույթի հեղափոխական գործիչների կողմից: Կամ քննվել է և արդյոք իրականության նկատմամբ հայերիս հարգալից, բայց և քննադատ, «իրականությունից այն կողմ», «գերիրական» ըմբռնման դրսևորումները, կերպարանափոխման ունակությունը, ձկուն վարվելակերպը, որոնք այդքան զարմացնում ու հիացնում էին դեռ մեծն Յուլիան և Կանտին: Դրվել է և արդյոք այս հարցերն առանձին կամ արևմտյան մշակույթի լայն ֆունի: Նշեմ, որ Վ.Ֆերեշտեյանի՝ Ժարիին նվիրված փոքրիկ ու սքանչելի ակնարկը, ցավոք, այս հարցերը չի բարձրացնում (<http://www.168.am/am/articles/13771>):

Ավարտելով լիցեյը՝ Բողրիյարն ուսումը շարունակում է Փարիզում՝ Սորբոնի համալսարանում, ուր սովորում է գերմաներեն լեզու և գրականություն, հատկապես հրապուրվելով Ֆ.Նիցշեով (հետագայում նրան նույնիսկ կանվանեն «մելանխոլիկ Նիցշե»), Լյութերի ուսմունքով, ինչպես նաև Ֆ.Գյոլդերիլինի պոետիկայով: Ավարտելով Սորբոնը 50-ականների վերջին՝ վաղ 60-ականներին նա համագործակցում է ֆրանսիական *Seuil* հրատարակչության հետ, գրականագիտական հոդվածներ է տպագրում ձախակողմյան կողմնորոշում ունեցող *Les Tempes modernes* ամսագրում (1962-63թթ.), գերմանիստիկա է դասավանդում Ֆրանսիայի տարբեր լիցեյներում: Բողրիյարի կայացման այս առաջին փուլի համար մեծ կարևորություն ունեին նրա՝ Կ.Մարքսի, Ֆ.Էնգելսի և Բ.Բրեխտի [6] որոշ աշխատությունների թարգմանությունները ֆրանսերեն: Ու եթե Բողրիյարի վրա մարքսիզմի ներազդման մասին շատ է ասվել ու գրվել (ցավոք, ոչ մեզ մոտ), ապա Բրեխտի էսթետիկայի պարագայում այդպես չէ: Այս առումով ընդգծենք բրեխտյան *Verfremdung* (տարանջատում) հասկացության կարևորությունը Բողրիյարի տեսակետների ձևավորման գործում: Բրեխտի սահմանումով ([7, p. 131])՝ «տարանջատումը» սոցիալապես կարևոր այն երևույթն է, երբ «դեպքերը տարանջատվում են իրենց ինքնին ակնհայտ, սովորական դարձած, ակներև որակներից՝ առաջացնելով ապշանք ու զարմանքի զգացում»¹: Բնութագրական են նաև Պ.Վեյսի (*P. Weiss*)՝ Մարատի սպանությանն ու Վիետնամական պատերազմի քննադատությանը նվիրված աշխատությունների [8], ինչպես նաև Վ.Մյուլմանի (*W. Mühlmann*)՝ «3-րդ աշխարհի *մեսիական* հեղափոխականները» աշխատության [9] Բողրիյարի ֆրանսերեն թարգմանությունները: Գործունեություն, որը հստակորեն պատկերում է նրան իբրև ձախ ռադիկալ մտավորական:

2.2. Անրի Լեֆևր և Ռոլան Բարտ

Բողրիյարի մոտեցումների ձևավորման համար վճռորոշ կարևորություն ունեցավ նրա հանդիպումը հայտնի սոցիոլոգ, նեոմարքսիստ, կոմու-

¹ Պ.Բրուքերը հատուկ նախազգուշացնում էր (ավաղ՝ ապարդյուն) բրեխտյան *Verfremdung*-ը որպես *օտարացում* (*alienation, отчуждение*) թարգմանելուց, համարելով այն ոչ համարժեք և բրեխտյան աշխարհընկալման պարագայում՝ ապակողմնորոշող: *Օտարացումը*, կարծում եմ, նոր ժամանակներում ավելի բնորոշ է Լեֆևրին (որպես *էզո*) և Բողրիյարին (որպես *ախտորոշում*), քան Բրեխտին:

նիստ և հակաստալինիստ (ԽՄԶՄ-ում նրան կոչում էին «Էկլեկտիկ փիլիսոփա») Ա.Լեֆևրի (*Henri Lefebvre*) հետ: Ուշ 40-ականներին և ողջ 50-ական թվականներին Ֆրանսիայում հրապարակվող՝ ամենօրյա կյանքի սոցիալական քննադատությանը նվիրված Լեֆևրի աշխատությունները, քաղաքային, *ուրբանիստական* տարածության կազմակերպման նրա դրույթները («Իրավունք՝ քաղաքի նկատմամբ», «Տարածության արտադրություն» և այլն) [10]¹, որոնք հանդիսանում էին կապիտալիզմի հանդեպ Ա.Գրամշիի նախանշած «մշակութային հեգեմոնիայի» արշավի սոցիալական բաղադրիչ, մեծապես ազդեցին Բոդրիյարի վրա սոցիալական խնդիրների ուսումնասիրության, կապիտալիզմի ռադիկալ քննադատության և նրա հանդեպ «վերջնական հաղթանակի» տեսանկյունից²:

Նույնքան բախտորոշ էր Բոդրիյարի ծանոթությունը Ռ.Բարտի (*Roland Barthes*) և նրա աշխատությունների հետ: Անտարակույս, այս ծանոթությունը, ամրացած մարքսիզմի, Բրեխտի և սոցիոլոգիայի հանդեպ նրանց ակնաձանքով, կապիտալիստական հասարակարգի իրողությունների նկատմամբ ընդհանուր քննադատական վերաբերմունքով, նորաձևության, գովազդի և լուսանկարչության հանդեպ կրքոտ հետաքրքրությամբ, խոր հետք թողեց բոդրիյարյան մտքի կայացման վրա: Այս առումով առանձնացնեմ բուրժուական հասարակության *մյութոսների* նկարագրումն ու դրանց գոյացման մեխանիզմների Բարտի քննությունը (օրինակ, գինի ըմպելու պաշտամունքը ֆրանսիական հասարակությունում՝ որպես առողջ, «կայացած» մարդուն ու իսկական ֆրանսիացուն հարիր սովորույթ,

¹ Լեֆևրի գրքերի անգլերեն առաջին հրատարակումները սկսվում են ուշ 80-ականներից: Լեֆևրի նշված (և այլ) աշխատությունների ռուսերեն և հայերեն թարգմանությունները բացակայում են: Կարծում եմ, որ Լեֆևրյան «իրավունք քաղաքի հանդեպ» սոցիալական թեման առավել քան ակտուալ է աշխարհի բազում քաղաքների, նաև մերօրյա Երևանի համար:

² Հարցերի այս թնջուկն արևմտյան (ու ոչ միայն) աշխարհի համար նորից, մոտ 40 տարի անց, առավել քան ակտուալ է: Հիշենք միայն փարիզյան արվարձաններում խռովությունների ու վանդալիզմի, Ռիոյի *ֆավելներում* իսկական պատերազմի, ոչ վաղ անցյալում Լոնդոնում ուսանողական անկարգությունների և Նյու Յորքում *Ուոլ-սթրիթի* «գրավման» ներկայիս գործընթացները, Ֆրանսիայում, Գերմանիայում և Անգլիայում մուլտիկուլտուրալիզմի տապալման մասին այս երկրների ղեկավարների վերջին հայտարարությունների համատեքստում: Պատկերն ամբողջացնելու համար հավելենք ԱՄՆ (և արդի գլոբալ կապիտալիստական) ֆինանսատնտեսական համակարգի ներկայիս ճգնաժամային երևույթները և ողջ Մեծ Միջին Արևելքի արաբական երկրներում ընթացող «դեմոկրատական» հեղաշրջում-հեղափոխությունները (հուսով եմ՝ լիբերալ մտավորականները կներեն ինձ չակերտների մեջ վերցված դեմոկրատիայի համար: Մանավանդ Լիբիայի արյունոտ դեպքերից հետո):

ի հակադրություն բժշկական իրողությունների)¹: Կամ՝ 1967թ. իր «Մոդայի համակարգը» գրքում [11]² նրա իրականացրած ֆրանսիական նորաձևության «ստրուկտուրալ», կառուցվածքային վերլուծությունը՝ հիմնված փարիզյան 1958-59թթ. մոդայի ամսագրերի նյութերի վրա: Վերլուծություն, որը Բարտին հանգեցրեց «սեմիոլոգիական պարադոքսի» ձևակերպմանը, համաձայն որի՝ հասարակությունն անընդհատ տեղափոխում է «ապրանքային», «իրային» («իր» բառից, *object, вещьный*) լեզվի տարրերը խոսակցական լեզու և հակառակը: Ըստ էության, կատարվում է պարադոքսալ մի բան՝ «իրը» (օրինակ, այս կամ այն տիպի նորաձև հագուստը) դառնում է «իմաստ» (օրինակ, սոցիալապես արժեքավոր առանձնահատկություն, գաղափարախոսություն և այլն): Իրայինը դառնում է իրական: Եվ որ ավելի զարմանալի է և, իրոք, պարադոքսալ. տեղի է ունենում և հակառակը՝ իմաստը դառնում է իր, իրականը՝ իրային: Ակնհայտորեն, Բարտի այս դիտարկումները չափազանց հոգեհարազատ են Բոդրիյարին:

60-ականների կեսից, Լեֆևրի և Բարտի ազդեցության տակ և հովանավորությամբ Բոդրիյարը սկսում է համագործակցել ֆրանսիական ձախռադիկալ ուղղվածության «*Utopie*» և «*Traverses*» ամսագրերի հետ: 1966թ. Բոդրիյարն աշխատանքի է անցնում նորաստեղծ Փարիզ-10՝ Նանտերի համալսարանում՝ դառնալով մետր (պրոֆեսոր) Լեֆևրի օգնականը (*maître assistant*): Այստեղ, Լեֆևրի ղեկավարությամբ, Բարտի, ինչպես նաև Պ.Բուրդիոյի (*Pierre Bourdieu*) խորհրդատվությամբ Բոդրիյարը ձեռնամուխ է լինում թեկնածուական ատենախոսությանը (որը ներկայացվել էր Նանտերի համալսարան 1960թ.): Այն ֆրանսիական լայն հասարակության դատին հանձնվեց 1968թ. «Իրերի համակարգը» գրքի տեսքով [12]³՝ արժա-

¹ Կարելի է միայն ուրախանալ, որ Բարտը չհասցրեց տեսնել Կ.Ջիդիի 1998թ. «Աստերիքսը և Օբելիքսը՝ ընդդեմ Կեսարի» (*Astérix et Obélix contre César*) հիմար ֆիլմը, ուր խիզախ գալլերը, ըմպելով իրենց «կախարդական խմիչքը», հաղթում են ապուշ հռոմեացիներին ևս մեկ անգամ հաստատելով ֆրանսիական ինքնությունը՝ միանգամայն տարբեր Հռոմեական կայսրության քաղաքակրթական ժառանգությունից: Ջիդիի այս ֆիլմը Ա.Ուդերզոյի (*Albert Uderzo*) և Ռ.Գոսինյի (*René Goscinny*) նույնանուն մուլտի ֆիլմային ռիմեյքն է: Այն, իր հերթին, հիմնված էր Ուդերզոյի 60-ականների կոմիքսային «Աստերիքս Գալլը» հերոսի արկածների վրա: Հատկանշական է, որ այս մուլտը ֆրանսիական հանդիսատեսին ներկայացվեց այսպես ասած գալ դը Գոլի օրոք հենց 1968թ., Ֆրանսիայի համար այս նշանակալի տարում (տե՛ս ստորև):

² Անգլերեն առաջին հրատարակումը 29 տարի անց՝ 1996թ., ռուսերենը՝ 2003թ., 36 տարի անց: Հայերեն թարգմանությունը չկա:

³ Անգլերեն առաջին հրատարակումը՝ 1996թ., 28 տարի անց, ռուսերենը՝ 2001թ., 42 տարի անց: Հայերեն թարգմանությունը չկա: Հետևելով ռուսական թարգմանության օրինակին՝ մենք Բոդրիյարի այս աշխատության վերնագիրը թարգմանում ենք որպես «Իրերի համակարգը» խոսափելով մեզանում այդքան ծանրաբեռնված «օբյեկտ» բառի օգտագործումից:

նանալով ջերմ վերաբերմունքի, հատկապես՝ ֆրանսիական ձախ լիբերալ մտավորական շրջանակներում: Արդեն իսկ այս առաջին մեծ աշխատությունով, որի վերնագիրը գրեթե կրկնում է Բարտի վերոհիշյալ գրքի վերնագիրը, ազդարարվեց նոր և ուրույն հեղինակի հայտնությունը:

2.3. Իրերի համակարգը

«Եթե սպառում բառը որևէ իմաստ ունի էլ, ապա դա նիշերի հետևողական մանիպուլյացիան է: ...Որպեսզի իրը դառնա սպառման առարկա, այն նախ պետք է դառնա նիշ»:

Շան Բոդրիյար,
Իրերի համակարգը, 1960թ.

Գրքի գլխավոր պնդումն այն է, որ դասական մարքսիզմի ապրանքի արժեքի մասին սահմանումները՝ ապրանքի արտադրական ու առևտրային արժեքներ, սահմանափակ են և այլևս չեն արտացոլում իրական հասարակական հարաբերությունները: Ապրանքի (*սպրոդուկտի*) այս դասական արժեքներով պայմանավորված բուն արտադրական ու առևտրային հարաբերությունների կողքին հայտնվել է մի նոր աշխարհ՝ իրերի (*object*) աշխարհը¹: Դասական մարքսիզմի *սպրոդուկտին* եկել է փոխարինելու սպառողական հասարակության *իրը*: Ընդհանրացնելով նորաձևության քննմանն ուղղված Բարտի մոտեցումներն ապրանքային սպառման ողջ տիրույթի և դրանց գովազդման վերաբերյալ՝ Բոդրիյարն առաջարկում է դիտարկել «իրի» նոր տիպի արժեք՝ «նիշային» արժեք (*sign value*): Սպառման վրա հիմնված հասարակությունում իրերի այս «նիշային արժեքն» ամեննին էլ չի սպառվում իրերի պրակտիկ (կիրառական) կամ առևտրային (փոխանակման) արժեքներով, ինչպես դա եղել է ի վերուստ: Այն չի սպառվում նույնիսկ իրի սեմիոտիկ, ստրուկտուրալ արժեքով, իբրև, օրինակ, *սրենտիժի*, դիրքի, խմբային պատկանելության կամ հարստության խորհրդանիշ. սա էլ նորությունն չէ մարդկային հասարակություններում:

¹ Պատկերացնում եմ՝ ինչ գվարճալի բառախաղերի հնարավորություն կտար Բոդրիյարին մեր իրականությունում «օբյեկտ» բառի նոր իմաստային երանգը: Օրինակ, «օբյեկտիվ երաժշտություն»՝ մեր «օբյեկտներում» կատարվող մուղամներով և բառաչանքով հագեցած, անտանելի բարձր երաժշտություն, կամ «օբյեկտի(վ) պայքար» և նման այլ հասկացություններ:

Նորությունն այն է, որ սպառման վրա հիմնված հասարակարգում, հասարակության բոլոր շերտերն անխուսափելիորեն ներքաշվում են ընտրության, կազմակերպման և անընդհատ նորացվող իրերի սպառման ու յուրացման անվերջանալի պարույրի մեջ¹: Ահա այս երևույթն է, որ ամբողջությամբ դուրս է մնացել մարքսիստական դասական քաղաքատնտեսության տեսադաշտից: Եվ այս երևույթն է, որ բնութագրական էր Բողրիյարին (այժմ՝ նաև մեզ) ժամանակակից սպառողական հասարակության համար: Անընդհատ սպառելով՝ մարդը կրնակալի հետապնդում է անվերջ սպրդող տեսիլքը, իդեալը, մոդայիկ մոդելը (տենչանքի այս սպրդող օբյեկտը՝ կասեր Լ.Բունուելը): Վարկ վերցնելով փորձում է առաջ ընկնել ժամանակից, փորձում է յուրացնել ինքը՝ ժամանակը, դարձնելով այն իր:

Դիտարկելով հանրային սպառման տեխնիկական ապրանքները (սրճադագ, ռադիոընդունիչ, ջեռուցիչ և այլն)՝ Բողրիյարը նշում է դրանցում արտաքին դիզայնի գերակայումը ֆունկցիոնալության վրա: Համեմատելով արդի զանգվածային արտադրանքի արդյունք հանդիսացող այս իրերի «իրեղեն իրողությունը» լեզվական համակարգի հետ՝ Բողրիյարը նշում է, որ լեզվում *կոնոտացիան* չի փոխում դրա *դենոտատիվը*: Օրինակ, կոշտ «ռ»-ի փոխարեն փափուկ «ր» արտասանելով դուք չեք փոխում ասվածի իմաստը²: Մինչդեռ հենց դա է տեղի ունենում «իրերում»: Այստեղ «կոնոտացիան» (դիզայնը, նորաձևությունը) զգալիորեն ձևափոխում է «դենոտացիան»՝ իրի տեխնիկական ֆունկցիոնալությունը, նրա «իմաստը»: Մեփական տեսիլքներն ու վախերը մերօրյա մարդը պրոյեկտում է տեխնիկական նորանոր խաղալիքների, *գաջեթների*³ վրա, ստեղծում կիսաֆանտաստիկ ռոբոտներ, մարդու և իրի հիբրիդներ⁴: Եվ այս ամենն ամրապնդվում և

¹ Այստեղ նշմարելի են գուգահեռներն արդի հասարակությանը բնորոշ Կոնրադ Լորենցի «մրցավազ ինքներս մեզ հետ» մահացու մեղքի հետ (տե՛ս [1]):

² Կամ մեզ՝ հայերիս բնորոշ «լ»-ի փոխարեն «ր» արտաբերելով (տե՛ս ստորև):

³ Ֆրանսերեն *gâche* բառից (անուր, ճարմանդ, լուծ): Չարմանալի են լեզվական համակարգի խորությունն ու անակնկալ դիպուկությունը: Մերօրյա *գաջեթները* իրոք որ լուծ են և ամուր կերպով պարփակում են հասարակության առավել դինամիկ և արդիական հատվածի անվերջանալի սպառման ծուղակում:

⁴ Բողրիյարն այստեղ հանգում է ուշագրավ, տիպիկ ինժեներական եզրահանգման: Բնական լեզվի համակարգը, չնայած իր հոսունությանը, այնուհանդերձ, կայուն համակարգ է: Այլ խոսքերով, այն «իմաստ» ունի (տե՛ս Ռ.Շեքլիի 1965թ. սրանչելի պատմվածքը, որին հղում ենք կատարել մեր ավելի վաղ հրապարակված հոդվածում [13], էջ 34): Հակառակ դրան, տեխնոլոգիան չի կարող և չի ձևավորում նույնքան կայուն համակարգ: Այլ խոսքերով՝ այն «անիմաստ» է և անվերջանալի, ծնելով իրերի նույնքան անվերջանալի բազմացումն ու «սերիական» բազմապատկումը: Ավելի ուշ Բողրիյարը կցտնի այս անվերջանալի գործընթացի էս-խատուլոգիական վերջը՝ բնական և գորբալ աղետ:

դեկավարվում է գովազդի միջոցով: Գովազդն այստեղ ոչ միայն և ոչ այնքան միջոց է՝ օժանդակելու այս կամ այն իրի վաճառքը, որքան գործիք՝ կոչված մարդկանց ուղեղներում ներդնելու իր անդամներին նյութական բարիքներ «նվիրաբերող» հասարակության ընդհանրական և գուրգուրիչ պատկերը:

Ընդ որում, եզրափակում է Բողրիյարը, սպառման անվերջանալի, համակարգային գործընթացը ծնվում և սնվում է օրգանական կյանքին բնորոշ անվերջանալի և վերջնականորեն անհասանելի «ամբողջականության իմպերատիվից»: Այս պարագայում իր/նշանները հակված են անվերջանալիորեն բազմանալ: Նրանք դա պետք է անեն, դատապարտված են անել, որպեսզի ամեն վայրկյան լրացնեն «իրականության» դեֆիցիտը: Ճիշտ այնպես, ինչպես ապրանքային դեֆիցիտը (մեզ շատ ծանոթ ԽՍՀՄ տարիներին), մի կողմից, պայմանավորում, մյուս կողմից՝ սաստկացնում է սպառումը¹:

Բողրիյարի «Իրերի համակարգում» մենք արդեն կգտնենք իր ավելի ուշ շրջանին, մեր կարծիքով, առավելապես բնորոշ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «իրականության դեֆիցիտը» (այն ավելի ուշ կվերաճվի «իրականության մահի»), «իրեղեն» անպատկառությունը (ավելի ուշ՝ «թափանցիկ ու անպատկառ գերիրականություն») և, վերջապես, հանրահայտ «Միմուլյակը»: «Իրականության» պակասին և դրա մահվանը մենք դեռ կանդրադառնանք, մասնավորապես՝ Բողրիյարի «Չարի թափանցիկություն» աշխատությունը քննելիս: Ինչ վերաբերում է «իրեղեն» անպատկառությանը, ապա «Իրերի համակարգը» գրքի «Գնողունական փառատոն» բաժնում Բողրիյարը գրում էր, որ հասարակության հավատը գովազդի նկատմամբ հիմնված է «նվիրատվությունների» հանդեպ մեր ինֆանտիլ զգացման վրա և պայմանավորված է գովազդի «խաղային» բնույթով²: Գովազդը, առանց որևէ նեգատիվիզմի, մեզ է «շնորհում» ոչ այնքան իրն ինքնին, որքան անվտանգության գուրգուրիչ զգացումը: Մենք զգայու-

¹ Արդյո՞ք այստեղ չի թաքնված, գոնե մասնակիորեն, ԽՍՀՄ փլուզման «զաղտնիքը»: Երբ «իրը», *դեֆիցիտը* հաղթեց, կուլ տվեց *Ուտոպիան*՝ նշանավորելով քաղաքական գոյի, գաղափարախոսական մտածելակերպի մահը: Դեռ 1960-68թթ. ձևակերպված Բողրիյարի այս մտքերը կարծես թե վերցված լինեն «սպառողական հասարակության» իրողություններում համեմատաբար վերջերս հայտնված նախկին ԽՍՀՄ և սոցիալիստական ճամբարի երկրներում տպագրված մերօրյա աշխատություններից:

² Հմտ. 1938թ. Յ.Յույզինգայի «Հոմո Լյուդենս»-ի հետ (*Johan Huizinga, Homo Ludens*):

նորեն արձագանքում ենք գովազդի տեսարժանությանը, նրա «խաղերին», նրա թատերայնությանը: «Հրապարակայնորեն ի ցույց դրված, այս ու այն կողմով ներկայացվող իրը [անխուսափելիորեն] երոտիկացվում է: Ու ոչ միայն սեքսուալ թեմատիկայի անմիջական օգտագործումով, այլև «շնորհիվ այն բանի, որ գնման սովորական ակտը մատուցվում է որպես ներկայացում, յուրօրինակ մի պար: Առօրեական այս արարքը՝ գնումը, հագեցվում է սիրային խաղի տարրերով, ուր առկա են ն՛ նախնական շոյանքը, ն՛ մրցակցությունը, ն՛ անպատկառությունը, ն՛ սեթևեթանքը, ն՛ անառակությունը (պրոստիտուցիան), ն՛ ամենը՝ ընդհուպ մինչև հեզնանք»¹: Հիշենք այս դիտարկումները, դրանք մեզ դեռ պետք կգան ավելի ուշ:

2.4. Միմուլյակրը

«Այսպիսով, խոսքը պատկերների մահացու հզորության մասին է... Հետևյալը ներկայացնում է պատկերի (*image*) եվոլյուցիոն, փուլային հաջորդականությունը. 1) պատկերը իրականության արտացոլումն է; 2) այն իրականության դիմակն է, դրա այլասերումը; 3) այն քողարկում է իրականության բացակայությունը; 4) այն ոչ մի կապ չունի որևէ իրականության հետ, այն իր սեփական *սիմուլյակրն* է»:

Ժան Բոդրիյար,
Միմուլյակրը և սիմուլյացիան, 1981թ.

«Իրերի համակարգում» մենք հանդիպում ենք նաև Բոդրիյարի, թերևս, ամենահանրաճանաչ *սիմուլյակր* հասկացությանը²: Գրքում այն առաջին անգամ հայտնվում է «Հզորության արստրակցիա» գլխում, հեղինակային հետևյալ առակում. «Գործը XVIII դարում էր: Եվրոպացի ոմն իյուզիոնիստ,

¹Զուր չէ, շարունակում է գերմանագետ Բոդրիյարը, որ «գերմաներեն գովազդ բառը (*die Werbung*) տառացիորեն նշանակում է սիրային տենչանք: *Der umworbene Mensch*-ը մինչև կոկորդը գովազդով լցված մարդն է, «գրգռված մարդը»:

²Բոդրիյարն այս հասկացության և եզրի հեղինակը չէ: Այն կարելի է հանդիպել դեռ Պլատոնի մոտ՝ որպես «պատճենների պատճեն» (հիշենք նրա քարանձավում փակված մարդկանց հայտնի տեսիլքը): Լոր ժամանակներում *սիմուլյակր* եզրը ներմուծվում և հետևողականորեն օգտագործվում է Ժ.Բատայի (*Georges Bataille*) կողմից: Այն մեկնաբանվում է Պ.Կլոսովսկու (*Pierre Klossowski*, նկարիչ Բալտուսի նկարիչ և փիլիսոփա եղբայրը), Ա.Կոժնի (*Alexandre Kojève*, Վ.Կանդինսկու զարմիկը՝ *Александр Кожевников*), Լ.Մամֆորդի (*Lewis Mumford*), Է.Մորենի, Ֆ.Ջեյմիսոնի և այլոց կողմից (նշենք, որ նշված հեղինակների գրքերի հայերեն, շատ դեպքերում նաև ռուսերեն թարգմանությունները չկան):

նախկինում՝ ժամագործ-մեխանիկ, մի մարդ-ավտոմատ պատրաստեց, որի շարժումներն այնքան բնական էին ու սահուն, որ երբ իյուզիոնիստը դրա ուղեկցությամբ բեմ էր բարձրանում, հարգարժան հանդիսատեսը դժվարանում էր տարբերել նրանց: Եվ այդժամ մեր ժամագործ-մեխանիկը որոշեց «մեխանիկացնել» սեփական շարժումներն ու ժեստերը: Միայն այդպես ներկայացումը նորից կվերագտներ իր իմաստը. չէ՞ որ մարդիկ նեղվում էին տարբերակել, թե ով է բեմում «իսկականը»: Թող որ հանդիսատեսները մարդուն դնեն ավտոմատի տեղ, քան հակառակը»: Բողոքիչարն այնուհետև շարունակում է. «Եթե սիմուլյակը այսքան հաջող կրկնօրինակում, սիմուլյացնում է իրականությունը, նշանակում է՝ այդպիսի սիմուլյակրի նկատմամբ ինքը՝ մարդը, դառնում է ընդամենը արտրակցիա»:

Ընդգծենք. իր առաջին գրքում Բողոքիչարը դեռ ընդունում է սիմուլյակրից այն կողմ իրերի և դեպքերի «իսկական»՝ նյութական, տեխնիկական (կամ քաղաքական) իրողությունը: Հետևելով բարտյան տերմինաբանությանը՝ Բողոքիչարն այստեղ խոսում է, այսպես ասած, «սիմուլյացիայի գրոյական մակարդակի» մասին («գիրի գրոյական մակարդակը» Բարտի մոտ): Ավելի ուշ, 1981թ. հրատարակված հանրահայտ «Սիմուլյակրը և սիմուլյացիան» գրքում [14]¹ նա արդեն տարանջատում, «պոկում» է սիմուլյակրը իրականությունից՝ դրան հաղորդելով ինքնուրույն գոյություն (տե՛ս բնաբանը): Ավելին, իրականությունն ինքը դառնում է սիմուլյացիա, իսկ օրեցօր բազմացող սիմուլյակրները փակում են մեր ճանապարհը դեպի «իսկականություն»: Ծրագրային այս մոտեցմանը համահունչ՝ Բողոքիչարը «Սիմուլյակրը և սիմուլյացիան» գիրքը բացում է հետևյալ բնաբանով (իրը թե վերցված Ժողովողից). «Սիմուլյակրը ամենևին էլ այն չէ, ինչը քողարկում է ճշմարտությունը: Այլ ճշմարտությունն է, որը թաքցնում է, որ այն այլևս գոյություն չունի: *Սիմուլյակրը* հենց *ճշմարտությունն է*»²:

¹ Անգլերեն առաջին հրատարակումը՝ 1994թ.՝ 13 տարի անց: Թուրքերեն առաջին հրատարակումը՝ 2003թ., 22 տարի անց: Ռուսերեն առաջին թարգմանության (տակավին թերի և ոչ ամբողջական) ու դեռ էլեկտրոնային հրատարակման մասին լուրերը հայտնվեցին միայն 2011թ. հուլիսին, 30 տարի անց (http://lit.lib.ru/k/kachalov_a/simulacres_et_simulation.shtml): Հայերեն թարգմանությունը չկա:

² Իհարկե, *Էկլիպսիաստեում* ոչ մի այսպիսի բան չկա: Բողոքիչարի բնաբանը ևս մեկ սիմուլյակր է, ևս մեկ արգելք՝ «իսկականություն» տանող ճանապարհին:

Պատկերավոր ասած՝ Բողոքի մոտ պլատոնյան ստվերներն անջատվում են քարանձավի պատերից և սկսում ապրել միանգամայն ինքնուրույն կյանքով: Դրանք այլևս չեն կրկնում կամ չեն «ներկայացնում» քարանձավից դուրս գոյություն ունեցող «իսկական» իրականությունը¹: Ամերիկյան հայտնի նեոմարքսիստ, փիլիսոփա, պոստմոդեռնի մեկնաբան և գրաքննադատ Ֆ.Ջեյմսոնի (*Fredric Jameson*) դիպուկ ձևակերպումը [15]²՝ *սիմուլյակրը*՝ «պատճեն է, որի բնագիրը գոյություն չունի» (և, գուցե, գոյություն էլ չի ունեցել՝ փորձենք մի փոքր լրացնել Ջեյմսոնին): Կամ՝ ինչպես մեր «իսկական ա»՝ հուսահատ հարցին զվարթ և ոչ պակաս դիպուկ պատասխանում են՝ «Ֆարշ ա, բայց լավն ա» մեր առավել ազնիվ ու անմիջական վաճառականները: Ընդ որում, էականն այստեղ այն է, որ ոչ մենք, ոչ մեր վաճառականը «իսկականի» հույս այլևս չունենք:

Ահա, թերևս, «սիմուլյակրի» ամենասպառիչ և համարժեք սահմանումը՝ գտնված երևանյան փողոցների «իրերի համակարգում»:

Հուլիս-սեպտեմբեր, 2011թ.

Շարունակելի

¹ Տե՛ս նաև Ժ.Դեյլոզի (*Gilles Deleuze*) 1967թ. «Գահրնկեց անել Պլատոնին» ծրագրային հոդվածը՝ վերատպագրված նրա «Իմաստի տրամաբանությունը» գրքում՝ «Պլատոնը և սիմուլյակրը» գլխում (*Logique du sens. Les éditions de Minuit, Coll. «Critique», Paris, 1969*): Դեյլոզի այս աշխատությունների հայերեն թարգմանությունը բացակայում է:

² Ջեյմսոնի նշված և այլ աշխատությունների ռուսերեն և հայերեն թարգմանությունները չկան (փոխարենը դրանք ինտենսիվ թարգմանվում և հրատարակվում են Չինաստանում): Թարգմանությունների մասին այս ձանձրալի թվարկումները մեզ պետք կգան ավելի ուշ: